



ՎԱՐԱԳՆ ՈՒ ՉԱՏԿՈՒԱՆ ՇԱԲԱԹԸ

Չատկուան շրջանին Վարագին դպրոցը զարդարուած է գոյնզգոյն ծաղիկներու, թիթեռնիկներու, հաւկիթներու, ճուտիկներու եւ նապաստակներու նկարներով:

Ամեն օր Վարագ իր ուսուցչուհիին եւ դասընկերներուն հետ կ'այցելէ պարտեզին մեծ վանդակը ու կը կերակրէ նապաստակը, հաւն ու ճուտիկները:

Անոնք ուսուցչուհիին հետ միասին հաւկիթները գոյնզգոյն կը ներկեն ու խմորը կլորելով-ուլորելով Չատկուան կարկանդակը կը պատրաստեն:

Մանկապարտեզի հաւկթախաղին օրը աշակերտներէն իրաքանչիւրը ձեռքը կողով մը բռնած պարտեզ կ'երթայ՝ պահուած հաւկիթները հաւաքելու: Պարտեզին մէջ աշակերտները կը գտնեն գոյնզգոյն հաւկիթներ ու կը լեցնեն կողովներուն մէջ:

Ծիլ դասարանէն՝ Շահանը չկրցաւ որելէ հաւկիթ գտնել ու դնել իր կողովին մէջ: Վարագ

իւր կողովին գունաւոր հաւկիթներէն մէկը կու տայ Շահանին:

Աշակերտները կը հաւաքուին հաւկթախաղի համար: Բոլորն ալ ուրախ կը խաղան ու կ'երգեն «Թաքա-թոքէ, թաքա-թոքէ, այսօր մեզի Չատիկ է»:

Աշակերտները հաւկիթ եւ կարկանդակ ուտելէ ետք «Բարի Չատիկ» կը մաղթեն իրարու ու տուն կ'երթան:

Չատկուան արձակուրդին Վարագ մօրը հետ ամեն օր եկեղեցի կ'երթայ: Ան շատ բան կը սորվի Յիսուսի կեանքին ու Յարութեան մասին:

Ոտնլուային օրը Վարագ կը տեսնէ, որ Յիսուս, բոլորին թագաւորը ըլլալով, խոնարհօրէն կը լուայ իր տասներկու աշակերտներուն ոտքերը:

Վարագն ու քոյրը իրենց տան մէջ հաւկիթները կարմիր ներկով եւ սոխի կեղեւով կը ներկեն ու կը շարեն մօրը շինած կարկանդակին շուրջ:

Անոնք նապաստակէ եւ ճուտիկէ խաղալիքներով կը զարդարեն նաեւ իրենց հիւրանոցը:

Խթման գիշերը Վարագին ազգականները կը հաւաքուին իրենց տունը: Նախ կ'աղօթեն ու ապա յատուկ ճաշեր կ'ուտեն:

Չատկուան օրը Վարագ ընտանիքին հետ եկեղեցի կ'երթայ: Պատարագէն ետք ան հաղորդութիւն կը ստանայ:

Երբ տուն կը վերադառնան, շատ մը այցելուներ կ'ունենան, հաւկթախաղ կ'ընեն եւ իրարու կ'ըսեն.

- ԵՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ:

- ՕՐՅՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՐԻՍՏՈՍԻ:

(Վերջ)



ԹԻՒԵ ՊԱՏՐԱՍՏԵՅՈՒՆ՝ ՄԱՐՏԻՆԻ ԱՇԽԱՆԻ-ՇԱՀԱՆԻ, ՆԱԿԱՍՏԱՐԵՅՈՒՆ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇԻՇԵՆՆ

Կրկնա՛ս իւրաքանչիւր ժամացոյցի տակ թուանշանով գրել ժամը:

<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	


Գունաւորե՛ այս գեղեցիկ պատկերը թուագրուած գոյներուն համեմատ:

1-Սեւ, 2-Կանաչ, 3-Մանիշակագոյն, 4-Դեղին, 5-Կարմիր, 6-Ճերմակ, 7-Սոխրագոյն, 8-Նարնջագոյն, 9-Վարդագոյն, 10-Բաց Կապոյտ:



Կրկնա՛ս լուծել:

$7 + 1 =$	$42 + 6 =$	$60 + 6 =$	$55 + 5 =$	$48 + 4 =$	$35 + 5 =$	$60 + 12 =$	$40 + 4 =$	$54 + 9 =$	$54 + 6 =$
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
$48 + 8 =$	$14 + 7 =$	$45 + 5 =$	$20 + 4 =$	$40 + 5 =$	$36 + 6 =$	$18 + 6 =$	$36 + 9 =$	$40 + 8 =$	$21 + 7 =$
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
$30 + 10 =$	$27 + 9 =$	$32 + 4 =$	$49 + 7 =$	$12 + 6 =$	$8 + 8 =$	$16 + 8 =$	$24 + 3 =$	$28 + 4 =$	$18 + 3 =$
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>



Միացո՛ւր թիւերը, ամբողջացնելու պահուած պատկերը, ապա գունաւորե՛ գայն:

ՄՈՎԼԻՆ

Մինչ Մովլին կը վազեր, ճամբան կը հանդիպի Պալու արջուկին, որ լճակին մէջ ուրախ-զուարթ կը լողար: Մովլին ալ կը միանայ անոր եւ երկուքը միասին կը սկսին շուրերուն մէջ ճլոմբ-ճլոմբ ցատկոտել:

Յանկարծ Մովլին թելերէն կը կախուի: Անտառի կապիկները կը փախցնեն գայն ու կը տանին իրենց բնակարանը:

- Բարե՛ւ Մովլի,- կ'ըսէ կապիկներու արքան: Որքա՛ն ատենէ ի վեր կը փափաքէի հանդիպիլ քեզի: Գիտե՛ս ինչու. կ'ուզեմ գաղտնիք մը իմանալ. գաղտնիք մը, զոր եթէ ջայտնես՝ լաւ գիտցի՛ր, որ կեանքդ վտանգի կ'ենթարկես:

- Ի՞նչ գաղտնիք կը հարցնէ Մովլին հետաքրքրուած:
- Կրակի՛ն, կրակի՛ն գաղտնիքը,- կ'ըսէ կապիկներու արքան: Եթէ իմացնես ինծի կրակին գաղտնիքը, անով կրնամ սարսափեցնել Շէր Խանը եւ մրցիլ մարդուն հետ ու մանաւանդ դառնալ անտառի տերն ու տիրակալը:

- Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... կ'ոռնայ Մովլին ու կը փախչի:
Ձայնը կը հասնի յովազին ու արջուկին, որոնք մինչ այդ զինք կը փնտռէին: Անոնք անմիջապէս օգնութեան կը փութան: Կապիկներուն վրայ կը յարձակին ու կ'ազատեն գայն անոնց ծուղակէն:

- Յիմա հասկցա՞ր թէ ինչու պէտք է հեռանաս անտառէն,- կը պնդեն անոնք վճռակամ:

Շէր Խանը հեռուէն կը հետեւեր այս բոլորին ու պատեհ առիթ կը փնտռէր յարձակելու Մովլին վրայ:

- Ես հո՛ս պիտի մնամ, ընկերներուս եւ եղբայրներուս քով պիտի մնամ,- կը կրկնէ Մովլին ու դարձեալ կը փախչի:

- Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... կը լսուի սոսկալի մռնչիւն մը, որ կ'արձագանգէ:

Մովլին կը փոխադարձէ՝ ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...
- Կրնա՞ս հետս մրցիլ:

- Անշո՛ւշտ,- կը պատասխանէ Մովլին քաջաբար:
Ու երկուքը մէկ կը սկսին վազել. Այնպէս վազել, որ անտառը կը դողդոջ անոնց ձայնէն:

- Մովլի՛, Մովլի՛, վերադարձի՛ր, Շէր Խանը պիտի սպանէ քեզ,- կը բացազանչեն յովազն ու արջուկը:

Երկինքը կ'որոտար: Կայծակները կը փայլատակէին եւ մերթ ընդ մերթ կը շանթահարէին չորցած ճիւղերը, որ անդադար կը բոցկտային:

Մովլին ու Շէր Խանը կայծակի արագութեամբ կը սուրային:

Վերջապէս, երկուքը մէկ, շնչասպառ, կը հասնին բացատ մը: Շերտաւոր վագրը կը սրէ ժանիքներն ու ճիրանները ու կատաղօրէն կը յարձակի Մովլին վրայ:

Մովլին կը փորձէ դիմադրել գայն: Հայր գայլը սորվեցուցած էր իրեն ինքնապաշտպանութեան որոշ օրէնքներ: Բայց վագրը այնքան կատղած էր, որ Մովլին շուարած էր. ի՞նչ ըներ, ինչպէ՛ս ըներ, որ ձերբազատուեր անկէ:

- Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... կը գոռայ Մովլին ու ճարճացող ճիւղ մը վերցնելով՝ կը ճօճէ օդին մէջ:

Շէր Խանը աւելի կը կատղի:

- Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... Ես չեմ վախնար քեզմէ,- կ'ըսէ Մովլին ու ձեռքի ճիւղը կը նետէ Շէր Խանի աչքերուն:

Շէր Խանը կը ճչայ, կը տապալտկի գետին ու կ'անհետանայ բոցկտացող ճիւղերուն մէջ:

Յովազն ու արջուկը ապշած կը դիտեն Մովլին քաջութիւնը: Մովլին հպարտօրէն կը ճեմէ անոնց մէջ ու քթին տակէն կը խնդայ:

«Թրալլալա՛, Թրալլալա՛... ջուրն անո՛ւշ... հովն անո՛ւշ...»

Յանկարծ անուշ ձայն մը կը հասնի Մովլին ականջին. օտար ու քնքուշ ձայն մը:

- Այս ի՞նչ քնքուշ ձայն է,- կ'ըսէ Մովլին ու կը բարձրանայ ծառի մը գագաթը:

Լճակի ափին աղջնակ մը կը տեսնէ, որ կուժը ձեռքին՝ շուր կը լեցներ:

Մովլին մէյ մը ինքզինք, մէյ մը աղջնակը կը դիտէ:

- Ասիկա ճիշդ ինծի կը նմանի,- կը մտածէ,- ճիշդ ինծի պէս քիթ, բերան ու աչքեր ունի, ձեռքեր ու ոտքեր ունի եւ ի՞նչ անուշ ձայներ կը հանէ:

Ու տարօրինակ զգացում մը կ'ունենայ: Ուշադրութիւնը կը սրէ ու հետաքրքրութեամբ կը հետեւի աղջկան շարժումներուն: Ինքն ալ կը փորձէ անոր պէս ձայներ հանել ու շարժումներ ընել:

Աղջնակը կ'երթայ, Մովլին՝ ետեւէն:

Վերջապէս գիւղակ մը կը մտնեն: Մովլին ապշած շուրջը կը դիտէ: Կը դիտէ իր նմանները, կը լսէ անոնց խօսակցութիւնը ու կ'որոշէ հոն մնալ:

Յովազն ու արջուկը թուփերուն մէջէն զինք կը դիտէին: Մովլին կը ժպտի անոնց ու ձեռքը ճօճելով կը հեռանայ:

- Մովլի՛, մի՛ երթար, մնացի՛ր մեր մօտ,- կ'աղաչէ արջուկը յուզուած:

- Մովլի՛, գնա՛,- կ'ըսէ Պաքիրա յովազը խորունկ շունչ մը քաշելով:

Ապա դառնալով արջուկին՝ կը մռլտայ.

- Մենք պէտք է այլեւս տուն վերադառնանք: Ու երկուքը մէկ, արցունքոտ աչքերով կը վերադառնան անտառ:

(Վերջ)



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Տպագրութեան առաջին եղանակներէն մէկը Չինաստանի մէջ երեւցաւ 1000 թուականին: Եւրոպայի մէջ մէջտեղ եկաւ 1450 թուականին, երբ Կիւթենպերկ հնարեց շարժական տառերը: Նախապէս, գիրքերը ձեռքով կ'ընդօրինակէին:



ԹՈՒՂԹ

Թուղթը կը պատրաստուի սելիլոզային բնաթելէ, որ ծառերէն կը ստանանք: Նախ կը հանեն ծառին կեղեւը, ապա անոր կոճղը կտրտելով պզտիկ մասերու կը վերածեն՝ գործածելով մեքենական կամ տարրալուծական միջոց: Լուացող մեքենաներուն մէջ փայտը կը տարբաղադրուի, մինչեւ որ մէջտեղ գայ խմոր մը, գոր կը ճերմկցուի քիմիական նիւթերու միջոցաւ: Գունաւորում եւ այլ բաղադրութիւններ կ'աւելցուին՝ ըստ պահանջին: Խմորը կը շաղուի եւ կը տարածուի մետաղեայ կտաւի մը վրայ, ուր ջուրին մեծ մասը կ'արտահոսի, ձգելով թուղթէ թերթ: Պէտք է տակաւին չորցնել գայն՝ տաք գլաններու ընդմէջէն անցընելով եւ վերջապէս փաթթել հսկայ ճախարակի մը վրայ:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բառերն ու պատկերները նախ կը ստացուին լուսանկարչական գործընթացով, ապա կը վերածուին մետաղեայ տպասալերու: Իւրաքանչիւր տպասալ կը հաստատուի գլանի մը վրայ, որ մէլան կը ստանայ յարակից գլանէ մը: Մէլանը կը փակի միայն տառերուն եւ պատկերներուն վրայ: Երբ տպագրական թուղթը կը ճնշուի տպասալին դէմ, գիրքին ու նկարները կը տպուին անոր վրայ:

ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գունաւոր պատկեր մը կազմուած է տարբեր գոյներ ունեցող կետիկներէ՝ դեղին, կապոյտ, կարմիր եւ սեւ: Թուղթին վրայ յաջորդաբար կը տպուին բոլոր գոյները, բացի սեւէն, որ կ'ըլլայ վերջին տպուած գոյնը: Այսպիսով կ'ունենանք գունաւոր պատկեր մը:

ԳԻՐՔ

Գիրքերը կը տպուին մեծ չափով թուղթերու վրայ: Ամէն էջ կը ծալուի այնպիսի կերպով մը, որ գիրքին էջերու յաջորդականութիւնը պահուի: Ծալուած էջերը կը կարուին, որմէ ետք գիրքին կռնակը կը փակցուի կողքին վրայ: Այս ամբողջը կը կատարուի յատուկ մեքենաներու միջոցաւ:

